

մը՝ որոյ վարիչներն ըլլալու են խորենաց-
ւոյ տուած թագաւորաց շարքն Վահագնէն
մինչև վան, և որը հաւանականաբար
Պարսից հպատակ էին:

Փաննոփոնի Հայաստանէն անցից առնեն
(401), Հայաստան կը բաժնուէր երկու
մասանց, Արեւելեանին կուսակալն էր Ու-
րոնդաս (Արդոնքսիասի փեսան), իսկ ա-
րեւմտեանին Տրիբազ: Այս կուսակալներն
գրեթէ ինքնիշխան թագաւորներ էին: Արմեններն երկրին տէրն էին, Կորդուաց
լեւներէն մինչ Կարնոյ Հիւսիսակողմ: Փաննոփոն խաղիներու հանդիպեցաւ Սե-
ծովու մօտ:

Խորենացւոյ տուած արքայից շարքի
վերջներէն՝ վան՝ ըստ մեր պատմագրաց
նորոգած է Տուսպան, ու իր անուամբ
վան՝ անուանած է զայն, իսկ վերջինն
վահէ իր բանական Դարեհ Կոտոմանու-
սի օգնութեան գնաց Պղեքսանդրի գէմ,
7000 ձիաւորօք և 40,000 հետեակօք և
անդ Արեւելի ճակատամարտին մէջ ին-
կաւ (331) և պարսկահպատակ Հայաստանն
(հարաւ և արեւմտեան մասն) Մակեդոնա-
կան կայսրութեան մի նահանգն եղաւ:
Իսկ Հայաստանի արեւելեան հիւսիսային
կողմ Կուրի և Երասխի հովտից մէջ՝ ուր
ազգազատ իշխանք կը տիրէին, շարու-
նակեցին իրենց ազատութիւնն վայելել:
Դժբաղդաբար անոնց մասին տեղեկութիւնք
կը պակսին մեզ:

Ն. ՏԱՂԱՒԱՐՆԱՆ

Շարաշարեյի

1. Տրիբազ իր անունով դրամ կտրած է, եփ-
րատայ վրայ առանձին պալատ չիւծած է, ար-
ծած է բաժակաւ ըմպելու իշխանութիւն ունէլ,
առանձին հայաբար և տակաւապետ ունէլ՝ որք
միայն արքայազանց յատուկ էին: —

2. Այս քաղաքի այդ անունակալութիւնն շատ
հին է, ինչպէս տեսանք:

Ուրիշներու կարծեաց համախիտ եւ զի-
ջող գտնուէ (Ֆինիերն):

Երեք բան ըժուարիմ էն՝ գաղտնիք պա-
նել, գրկմանց համբերել, ժամանակը օգ-
տակար անցնել:

Վէճ մը, որպիսի է այն որ կեդիք եւ
կարծիք բառերուն վրայ տեղի ունեցաւ
Բագմալէպի մէջ, իր մեծագոյն շահեկա-
նութիւնը կ'առնէ ոչ այնքան լուծուիւն
որուն կրնայ յանգիլ, որքան մեթոտէն և
գիտական զգուշաւորութենէն որք խնդիրը
լուծելու համար կը կիրարկուին:

Փորձ. Պետերսըն եղաւ առաջինը կար-
ծելու թէ կեդիք և կարծիք միեւնոյն բա-
ռի երկու ձեւերն են: Ըստ իս այդ հայ-
եացքը սխալ է, և կարծեմ ապացուցած
եմ զայդ արդէն (Բագ. Եր. 1908): Սա-
կայն կը տեսնեմ թէ «կեղակարծ» բառը
իբրեւ քար զայթակողութեան կը մնայ դեռ,
որուն վրայ Տրեթ. Թրիքսեան խան իր
կողուանը առած է (Բագ. նոյն թիւ.) Պե-
տերսընի կարծիքը հաստատուելու:

Ուրվհետեւ կեղ Ձայնը այդ բառին մէջ
կարծ ձայնին կցուած է, իմ յարգելի եղ-
բայրակիցը կը հետեւնէ թէ կեղ—ը կարծ
—ին խանգարեալ մէկ ձեւն է, և ունի նոյն
նշանականութիւնը ինչ որ կարծ—ը: Ուրիշ
խօսքով, «կեղակարծը» կրկնաւոր բառե-
րու կարգը կը զնէ իբրեւ կարծ—ու—կարծ—ի
խաթարեալը իր առաջին եզրին մէջ, ի
հաստատութիւն այս հայեացքին կը յիշէ
ուրիշ կրկնաւորներ որոց առաջին կամ
երկրորդ եզրը բուն արմատէն քիչ մը կը
տարբերի: Այդ է իր բոլոր փաստը ի հաւա-
տատել թէ կեդիք և կարծիք նոյն են, ա-
ռաջինը երկրորդին խանգարեալ մէկ ձեւն է:

Փաստը հետո և համոզիչ ըլլալէ՝ Երբ,
օրինակի համար, կոչկոմ, կիկիմ, խառնա-
մասն, ժանտածուտ բառերուն կը նայինք,
հակառակ անոնց երկու եզրներուն միջև
գտնուած տարբերութեանը, իսկոյն կը
ճանչնանք անոց կրկնաւորի պէմբը: Սա-
կայն կեղակարծ—ը այդպէս ստոյգ կերպով
ցոյց չի տար մեզի կրկնաւորի հանգամանա-
քը: Ուսկից կ'առնենք վստահութիւնը հա-
մարելու թէ կեղ—ը կարծ—ի կրկնութիւնն
է այդ բառին մէջ: Այդ բառին յեղակարծ
ձեւին մէջ անմասնութիւնը այնքան մեծ
է առաջին և երկրորդ եզրներուն միջև որ

անոնց նշոյնութեան վարկածը բոլորովին անտեղի կ'երևնայ: Ինչ օրէնքով կարծ—ը յեղ—ի փոխուած կրնայ ըլլալ: Լեզուին հո—լովութեան օրէնքներուն ոչ մէկը կրնայ արդարացնել այդ փոփոխութիւնը: Գիտե—լու է նաև թէ այն դէպքերուն մէջ ուր եզրներէն մէկը բռնագործուել է կամ շին—ծու, երբէք բռնագործուել եզրը առանձին շրջաբերութեան չեւեր: Խառն կայ, բայց մասն չկայ, ժառ—ը գիտենք, բայց ժուտ բառ չենք ճանչնար: Եթէ կեղ—ը կարծ—ի այլանշանի ու անօրինակ մէկ բռնագործ—սումը իսկ ըլլար, ի՞նչպէս կրնար անկախ բառի մը իրաւունքները վայելել, և ան ալ ոչ իրիւն կեղ, այլ իրիւն կեղծ շրջա—բերութեան լլեւելով: Ինչ կողմէ ալ որ դիտենք բառին դիմագիծը, անկարելի կը գտնենք ենթադրութիւնը թէ կեղանկարծ կարծակարծ—ի այլալիւս մէկ ձևն ըլլայ:

Վերջապէս աւելցնենք նաև մեր լեզուին ջախջախիչ վկայութիւնը: Անիկա մեզի կ'ըսէ թէ կայծկարծ կամ կայծկարծ սկզբ—բնական կրկնաւորէն, սեղմումով եւ փո—փոխութեամբ, ինչ օրինաւոր և հարազատ ձև յառաջ կու գայ: Այդ օրինաւոր ու հարազատ ձևը կ'ստանայ է: Ասիկա ա—մենք կ'ընդունին, և իմ գիտուն բարե—կամն ալ իր յօդուածին մէջ կը յիշէ զայն սապէս —

«Կասկած — կած կած, կայծ—կայծ—էն անցնելով՝ կարծկարծ»:

Այո, մեր լեզուն իսկ մեզի կը սոր—վեցնէ թէ կայծկարծ—էն ելած է կասկած, և ոչ կեղու, կարու, յեղս յաղա—կարծ:

Ինչ է սակայն այս կաղանկարծ—ին կազ—մուածքը: Ինչ է անոր առաջին եզրը՝ կեղ: Եւ կարծեմ թէ անիկա այն արմատն է որ «Գայթա—կղ—իմ» բառին մէջ ևս կը տեսնուի: Ինչպէս որ ունինք գայլ և գեղ (գեղոց), այնպէս ալ գայր և գեղ կամ կեղ: Գեղ—ում, գը—որիմ, գայ—արիմ բայերուն արմատին մէկ ձևն է այդ կեղ կամ գեղ—ը: Ինչպէս որ գայր արմատը, որ ծած, շրջ—ջած կը նշանակէ ինչպէս բարդին մէջ, որուն հոմանիշ են խելա—յեղ և խելա—շողջ, անանկ ալ կեղ—ակարծ և յեղակարծ կը

նշանակեն մոլորող, շրջած, փոփոխական, անհաստատ, երկմիտ, անստոյգ կարծիք: Այսպէս ըսուած է «Պետրոս երթալը զհետ կեղակարծեց»: Ի՞նչ խօսքով կեղակարծիք —ը դիրքայեղ, դիրափոխուկ, դիրազուր (կամ դիրագեղ) կարծիքն է: Նաև, յե—ղակարծ և կեղակարծ իրարու խանգարեալ—ները չեն, այլ երկու տարբեր արմատնե—րով—յեղ և կեղ—բարդուած են, և իմաս—տով մերձանիշ են: Վերջապէս այս կեղ կամ գեղ արմատը որ զիլ և գուլ (արիմ) արմատներուն լծորդն է և կը նշանակէ զլորում, շրջում, փոփոխում, այլ է միւս կեղ—էն որ կեղ—ին մէջ կը տեսնենք:

Կ'եղակացնեմ թէ կեղակարծ—ին կեղ—ը ինչևիցէ կազմական կամ նշանակական առնչութիւն չունի կեղծիք բառին հետ, և թէ կարծիք ու կեղծիք բոլորովին տար—բեր արմատներէ են կազմուած: Կը փա—փաքիմ որ Գեղ. Հ. Անդրիկեան ըսէ թէ յաղոցեցայ գաղթակողութեան քարը մէջ—տեղէն վերցնել, շնորհիւ — «գայթակղու—թեան»:

Մ. ՍՄԵԼԱՆ ԳԱՐԵԻԼԵԱՆ

Նիւ Երբ.



ԱՆՏԻՊ ԷԶԵՐ

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆԻ

Այս խորագրի տակ կը փափաքէմք հետ—զմտել գետնիդ մեծ բանաստեղծին եւ մատենագրին քանի մը առօրեայ յուշերը, որոնք իր հոգեկան կեանքին հետ թողուն բայց կրօնական միտքը կը ցայտեցնեն: Հայ ազգը զՀ. Ալիշան կը ցանցնայ գրչին ա—մենագրի արտաբերութիւններով, ներքին կեանքը՝ որ մասամբ ծանօթ էր միայն իր հոգեկցաց՝ կը յայտնուի անա իր ամենօ—րեայ կրած տպաւորութիւններէն եւ ազ—դեցութիւններէն, զորս ինքը աւելորդ չէ տեսած՝ գրի առնուլ: Աւանդ որ այս տեսակ մը օրագրութիւնը կարուկ վիճակներով եւ սուածներով միայն կը բացատրուի եւ մենք իբր քօրով մը ծածկուած կը տեսնենք սրբ—բասէր Հօր եռամդեամբ բարախով սիր—տը, որ ամուշտ որոշած էր՝ քանիսկայա—կան կնիքը դեռ նոր ընդունած՝ հաւատա—րիմ ըլլալ ամէն օր թղթի վրայ նկարելու